ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«14» հոկտեմբերի 2019 թվականի N:250 ք.Գյումրի

ԱԼԲԵՐՏ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, 29-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 4-րդ, 11-րդ և 22-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից 2019 թվականի հունվարի 11-ին հաստատված Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2019 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ղեկավար աշխատողների և մասնագետների պատրաստման պլանը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի 2019 թվականի հոկտեմբերի 8-ի զեկուցագիրը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Ալբերտ Մարգարյանին 2019 թվականի հոկտեմբերի 15-ին գործուղել քաղաք Երևան՝ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում կայանալիք արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցերով դասընթացներին մասնակցելու նպատակով:
2. Գործուղման տևողությունը մեկ օր՝ 2019 թվականի հոկտեմբերի 15-ին:

3. Ալբերտ Մարգարյանի՝ գործուղման գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի պետ Տիգրան Հարությունյանին:
4. Ալբերտ Մարգարյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն հաստատված ձևի:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի՝ հետ ճիշտ է